ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2012թ. մայիսի 16-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստանալու նպատակով <<Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. <<Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն>> ՍՊԸ կանոնադրության պատճեն
2. իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճեն
3. պետական տուրքի վճարման անդորրագրի պատճեն
4. վերամշակման համար նախատեսվող թափոնների բնութագրերը և տեխնոլոգիական սխեման
5. արտադրական հզորությունների հակիրճ նկարագրությունը
6. մասնագետների որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները
7. տեղեկանք համապատասխան տարածքային հարկային տեսչությունից՝ հաշվառման մեջ լինելու մասին:

Հայտատուի կողմից ներկայացվել է նաև <<Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն>> ՍՊԸ տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը և <<Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն>> ՍՊԸ անվտանգության վկայագիրը:

Հաշվի առնելով մոլիբդենի արտադրության նշանակությունը երկրի տնտեսության զարգացման գործում և այն, որ <<Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն>> ՍՊԸ ունի մոլիբդենի խտանյութի վերամշակման փորձ, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության առկայությունը և ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակում իրականացնելու համար տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Հարությունյան

Հ. Միրզոյան

Ե. Տերտերյան

Կ. Կարապետյան

Կ. Սահակյան

Տ. Ամիրյան

Հ. Հովսեփյան

Ն. Կնյազյան

Ա. Պետիկյան

Ի. Հակոբյան